Այսօր, երբ եկել ենք այստեղ, մէկ ամսայ արձակուրդից յետոյ, կրկին վստահութիւն յայտնելու մեր կառավարութեան, կրկին գնալու ժողովրդի մէջ, այդ բոլորից առաջ մենք պարտաւոր ենք այստեղ ասել ու կառավարութեան զգուշացնել, որպէսզի նա լինի հետևողական իր բոլոր գործերի մէջ, որ նա իրար համաձայնեցնի մեր երէկն, այսօրն ու վաղը, և ապա պէտք է մեր կառավարութիւնը լաւ իմանայ, որ հիւսիսից ու հարաւից, արևելքից կամ արևմուտքից բոլոր եկողները մեզ համար հաւասար թշնամիներ են, եթէ երբեք աշխատեն ոտնահարել մեր արիւնոտ անկախութիւնն ու մեր երկրի իրաւունքները (բուռն ծափահարութիւն):

Զեկուցման քննութիւնը վերջանում է. պատգ. Ա. Աբեղեանը դաշնակցական ֆրակցիայի կողմից առաջարկում է հետևեալ բանաձևը.

«Լսելով նախարարապետի զեկուցումը երկրի վիճակի մասին՝ մայիս 5-ից մինչև յունիս 5-ը, ինչպէս նաև քննութեան առնելով խորհրդարանի կողմից արտակարգ լիազօրութիւններով օժտուած կառավարութեան գործունէութիւնն ու ձեռք առած կտրուկ միջոցները՝ վերականգնելու երկրի խաղաղութիւնն ու ժողովրդի անդորրութիւնը, նաև ապահովելու մեր հայրենիքի սահմաններն արտաքին թշնամիներից՝ խորհրդարանը տալիս է իր լիակատար հաւանութիւնն այդ ամենին, ջերմագին խրախուսում է այդ գործունէութիւնը և առաջարկում է կառավարութեան նոյն ուղիով անսայթաք և անշեղ առաջ ընթանալ այսուհետև ևս»:

Բանաձևն ընդունուեց բուռն ծափահարութիւններով. դէմ ձայն տուեց էսէրական ֆրակցիան:

Գ. Վարշամեան. — Օրէնսդրական յանձնաժողովի կողմից զեկուցում է խորհրդարանին մինչև 1920 թ. օգոստոս 1-ը արձակուրդ տալու օրինագծի մասին: Ցօդուածական քննութիւնից յետոյ օրինագիծն ընդունւում է, որով խորհրդարանը ստանում է արձակուրդ մինչև 1920 թ. օգոստոս 1-ը, արձակուրդի միջոցին ընթացիկ օրէնքներ հաստատելու իր իրաւունքը վերապահում է կառավարութեան և յանձնարարում է նախագահութեան, անհրաժեշտ պարագային, հրաւիրել արտակարգ նիստ:

Նիստը փակւում է դիշերւայ ժամը 11-ին:

ՕԳՈՍՏՈՍ 2-Ի ՆԻՍՏԸ

Նիստը բացւում է երեկոյեան ժամը 7-ին: Ներկայ են գաւառից նոր վերադարձած պատգամաւորները: Դահլիճը լիքն է խուռն բազմութեամբ:

Նախագահում է փոխ-նախագահ Աւ. Սահակեանը:

Օրակարգն է նախարարապետի զեկուցումը և խորհրդարանին նոր արձակուրդ տալու մասին մտցրած օրինագծի քննութիւնը:

Նախարարապետ և արտաքին գործերի նախարար Հ. Օհանջանեան. — (նախարարապետի ամբիոն երևալն ընդունուեցաւ բուռն, աղմկալից և որոտընդոստ ծափահարութիւններով): Հայաստանի խորհրդարանի պատգամաւորնե՛ր. երեք ամիս անցաւ այն օրից, երբ դուք ինձ յանձնեցիք այս երկրի կառավարութիւնը: Առաջին փոթորկալից ամսայ մասին զեկուցումն ես տուել եմ ձեզ իր ժամանակին: Այն ամենը, ինչ կատարուեց այս ամիսների ընթացքում — ունեցաւ ճակատագրական նշանակութիւն մեր պետութեան համար: Մեր հանրապետութիւնը կանգնած էր կործանման վտանգի առաջ: Բայց մեր ժողովրդի արիութիւնը կարողացաւ ինքն իրեն փրկել, և այդ ամիսը փորձութեան ամիս դարձաւ ժողովրդի և զօրքի համար: